ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2019

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ
ԵՎ
ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 6

Խմբի համարը

Նստարանի համարը

Սիրելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդա՛ յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող ես դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարելի է օգտագործել սևագրության համար:

Ուշադի՛ր եղիր պատասխանների ձևաթուղթը լրացնելիս.

- ընտրովի պատասխանով առաջադրանքներում քո ընտրած տարբերակի համարին համապատասխանող վանդակում դի՛ր X նշանը (միևնույն այունակի մեկից ավելի վանդակներում ցանկացած նշում կհամարվի սխալ),
- 45-50-րդ և 66-68-րդ առաջադրանքներում յուրաքանչյուր առաջադրանքի համապատասխան համարների տակ դի՛ր X նշանը:

Մաղթում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1 **Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում *հ:***

1) հեղ-եղել, ամպ-ովանի, ընդ-ուպ
2) շնոր-ալի, արհավիր-ք, խոնար-ել
3) տարաշխար-իկ, սուր-անդակ, հայթ-այթել
4) տնօր-նեք, ժպիր-, հեղ-եղուկ

2 **Համարակալված բառերում բաց թողած տառերը (տառակապակցությունները) պատասխանների ո՞ր շարքում են ճիշտ նշված:**

Վաղորդյան աղջամուղջը հետզհետե ան-ացավ(1)՝ իր տեղը զի-ելով(2) արևի շառագույն ճառագայթներին: Բնությունը զար-նեց(3): Ծառերի և ծաղիկների սաղար-ներին(4) նստած ցողը մեղմ-րեն(5) գոլորշիացավ, և յուր-րինակ(6) փայլով շողշողաց մուգ կանաչ բուսականությունը: Պ-նված(7) սալորենին նազեց՝ ասես համբույր ու-արկելով(8) ճյուղերին թառած արագիլներին: Արթնացան նաև ծաղիկները՝ գինարբու-ը(9), սուսա-բարը(10), վարդը:

1) 1-է, 5-ո, 8-ղ, 10-ն
2) 2-չ, 3-թ, 7-ճ, 9-կ
3) 1-է, 4-թ, 7-ճ, 9-կ
4) 3-թ, 6-օ, 9-կ, 10-ն

3 **Ո՞ր շարքի բաղադրյալ հատուկ անունների միայն առաջին բաղադրիչն է գրվում մեծատառով:**

1) ՇԻՐԱԿԻ ԼԵՌՆԱՇՂԹԱ, ՆՈՅԻ ՏԱՊԱՆ, ՇՎԵԴԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ
2) ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՏՈՆ, ԼԱՉԱՐՅԱՆ ՃԵՄԱՐԱՆ, ՋԻԲՐԱԼԹԱՐԻ ՆԵՂՈՒՑ
3) ՊԱՆԱՍԱՅԻ ՋՐԱՆՑՔ, ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՊԱԼԱՏ, ՆՈՐ ԱՐԱԲԿԻՐ
4) ՊԻՐԵՆԵՅԱՆ ԹԵՐԱԿՂՋԻ, ՄԵՐՉԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔ, ՍԱՍԱՆՅԱՆ ՏՈՀՄ

4 **Ո՞ր շարքի բոլոր բառերում հնչյունափոխություն կա:**

1) մտացածին, երփներանգ, հոգատար
2) լծորդություն, բրգաձև, արտերկրացի
3) վայրկենական, ուխտադրուժ, մանրանկար
4) վարչակարգ, շրջադարձ, այգաբաց

5 **Ո՞ր տառակապակցությունը թվային արժեք *չունի:***

1) ՀԹ
2) ՇԾ
3) ԺԿ
4) ՌՂ

6 **Ո՞ր շարքի բոլոր բառերում է գաղտնավանկի *ը*-ն ճիշտ տեղադրված:**

1) կ(ը)րկնել, հանգց(ը)նել
2) քն(ը)նվել, փ(ը)րկվել
3) կտ(ը)րվածք, հայտ(ը)նվել
4) դստ(ը)րիկ, հագն(ը)վել

7 **Ո՞ր տարբերակում է *գորդյան հանգույցը կտրել* դարձվածքի իմաստը ճիշտ բացատրված:**

1) պարզաբանել հարաբերությունները
2) հեռանալ բարեկամներից
3) ենթարկվել դաժան դատաստանի
4) լուծել դժվարին, խճճված խնդիրը

8 **Փակագծերում տրված բառերից մեկը տվյալ նախադասությանը համապատասխանում է, մյուսը՝ ոչ. ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ:**

ա. Խոսքը (1. վերաբերվում, 2. վերաբերում) է մեր օրերի հերոսներին:
բ. Ժամանակն այդպես էլ չսպիացրեց նրա հոգում մնացած (1. խարամը, 2. խարանը):
գ. Օրակարգում ներկայացված ոչ մի հարցի շուրջ (1. միացյալ, 2. միասնական) որոշում չկայացվեց:
դ. Որոշվեց հիվանդի վիրահատությունը կատարել (1. տեղային, 2. տեղական) անզգայացումով:

1) ա -1, բ -2, գ -1, դ -1
2) ա -1, բ -1, գ -2, դ -2
3) ա -2, բ -1, գ -1, դ -2
4) ա -2, բ -2, գ -2, դ -1

9 **Ո՞ր շարքի բոլոր բառազույգերն են կազմված հականիշներից:**

1) խաղաղ-անհանգիստ, նենգ-ազնիվ, վարժ-փորձառու
2) կիզել-հանգցնել, սուրբ-պիղծ, ականակիտ-պղտոր
3) քաջալերել-վիատեցնել, լաջվարդ-կապույտ, հաղթել-պարտվել
4) հակիրճ-ծավալուն, վեհանձն-փոքրոգի, փութկոտ-շտապ

10 **Ո՞ր տարբերակում բառի սխալ բացատրություն կա:**

1) **ռահվիրա**-որևէ բանի սկզբնավորող, **տոչորել**-սաստիկ ծարավով տանջել
2) **քանքար**-բնատուր ձիրք, **սողնակ**-դուռը փակելու ձող
3) **ճյունագես**-սպիտակ մազերով, **մածուցիկ**-կպչուն հատկություն ունեցող
4) **սողոսկել**-մեկի դեմ դավեր լարել, **ընկեցիկ**-ծնողներից լքված երեխա

11 **Տրված բառերից որի՞ արմատին (արմատներից մեկին) կարող է միանալ *ընդ-* նախածանցը և բառ կազմել առանց երկրորդ ածանցի:**

1) առաջնորդ
2) ամենասուր
3) հպանցիկ
4) հակառակ

12 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են բարդածանցավոր:**

1) կարգապահական, խորաքնին, սրտմաշուկ
2) խելահեղություն, խմբագրատուն, վերջնախաղ
3) բնագիտական, անընդգրկելի, բանտարկյալ
4) աներկբայորեն, ակնածանք, վայրէջք

13 **Ո՞ր շարքի բոլոր բառերի հոգնակի թիվն է կազմվում *-ներ* վերջավորությամբ:**

1) հայագետ, գործազուրկ, մարդասեր, ծաղկաթերթ
2) տեսակետ, օրացույց, շարասյուն, ռուս
3) օրինազանց, ժանր, նախագահ, անտառահատ
4) երկնաքեր, սևամորթ, նետաձիգ, պատճեն

14 **Ո՞ր շարքում տրված տեսակին *չպատկանող* դերանուն կա:**

1) դա, մյուս, այսչափ, այնտեղ - *ցուցական*
2) ուրիշ, այլ, որոշ, ինչ-որ-*անորոշ*
3) ողջը, նույն, բոլորը, ամեն ոք-*որոշյալ*
4) երբ, ուր, ով, ինչպես -*հարաբերական*

15 **Ո՞ր նախադասության մեջ հոդի գործածության սխալ *չկա:***

1) Կանչենք այն մարդկանց, որոնք սպասում են իրենց մրցանակներին, պարգևներին կամ որևէ այլ նվերին:
2) Ամռան երկար օրերին էլ արևն հազիվ մի քանի ժամ է լույս տալիս Մթնաձորի անտառներին:
3) Անտոնը աղվեսին գցեց ուսին, ես մոշահավերը վերցրի, և մենք վերադարձանք:
4) Անահիտն երազում էր ամեն գնով նվաճել երիտասարդի սիրտը:

16 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են ենթարկվում *ու* հոլովման:**

1) այգի, արարել, թերակղզի, երեխա
2) ոգնի, պատանի, հայորդի, ամուսին
3) անկողին, ձի, կիրակի, մարդ
4) կղզի, բանալի, Աստված, տատ

17 **Ո՞ր շարքում են միայն պարզ ժամանակաձևեր:**

1) մի՛ խոսիր, եկել եմ, բաց թողեց
2) պիտի նայես, աղո՛թք արա, դուրս եկավ
3) հավատացել էի, մի՛ հիշիր, կանգ առա
4) չի գրի, սիրեմ, պետք է ժպտաս

18 **Ո՞ր նախադասության մեջ կրավորական սեռի բայ կա:**

1) Արշալույսի բոսոր ճառագայթները արտացոլվել էին ծովի բեկբեկուն ալիքների մեջ:
2) Աղջիկը անծանոթ քաղաքի ծուռումուռ փողոցներում մոլորվել էր:
3) Հակառակ այդ անհաջողությանը՝ Արամը չէր վհատվել:
4) Քաղցից ու թշնամուց հալածված գաղթականները վերջապես անցան Արաքսը:

19 **Ո՞ր շարքի բոլոր բայերն են սահմանական եղանակի:**

1) չասաց, գտնելու եմ, գնացել էինք, կաս
2) տալիս է, կամենում ես, ցանկանք, փախավ
3) գալիս եմ, չբերեր, ուզել էր, հիշում էի
4) չի որոշվի, խոսում եմ, եկել է, մոտեցրի

20 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են ստորադասական շաղկապներ:**

1) քանի դեռ, որտեղ, թեպետ, չնայած
2) թեև, եթե, քանի որ, որպեսզի
3) որովհետև, մինչդեռ, թե չէ, սակայն
4) թեկուզ, հենց որ, ինչ, նախքան

21 **Ո՞ր նախադասության մեջ բաղադրյալ ստորոգյալ կա:**

1) Ժողովուրդը հեքիաթների մեջ է արտահայտում իր իղձերը:
2) Փոքր գրողները հավերժական հանճարների լուծը կրողն են:
3) Հայ ժողովուրդը միշտ պետք է բարձր պահի ազգային արժանապատվությունը:
4) Դու ես այդ բոլոր առաջարկներն արել:

22 **Փակագծերում տրված բառերի ո՞ր հերթականությունն է համապատասխանում նախադասության մեջ դրանց տեղադրման ճիշտ կարգին (բառերը տրված են ուղիղ ձևով):**

……. հետո կաղնին տապալվել էր՝ ……. հետ տանելով ……. ու բնության ……. հրաշք հուշարձանը:

(1. պատմություն, 2. ստեղծել, 3. տարի, 4. ինքը)

1) 3, 1, 2, 4
2) 2, 4, 3, 1
3) 3, 4, 1, 2
4) 2, 1, 4, 3

23 **Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:**

Երբ դասաժամը վերջացավ, և աշակերտները պիտի ցրվեին, ընկերս, որ շատ երգ սիրող էր, խնդրեց ուսուցչին, որ աշակերտները մի երգ երգեն:



24 **Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ** ***չկա:***

1) Մեզ անհրաժեշտ էին բոլոր հանգամանքների և բոլոր մանրամասների ստուգումների արդյունքը:
2) -Մեզ՝ իբրև ճշտապահ ծառայողներ, ուշ թե շուտ կնկատեն և կխրախուսեն,- հուսադրում էր Գևորգը հավաքվածներին:
3) Մտատանջությունների վերջին հյուլեն միանգամից և ամբողջությամբ անհետացավ նրա հոգուց:
4) Իմ բոլոր մտքերն ու հույզերը դարձել է մի մեծ ցանկություն, և ես այլ բանի մասին չեմ կարողանում մտածել:

25 **Պարզ (դերբայական դարձվածով) նախադասություններից ո՞րն է ճիշտ փոխակերպված բարդի:**

1) *Էթնայի ստորոտում ապաստանած Կատանիա քաղաքը հայտնի է իր բնակիչների դյուրաբորբոք բնավորությամբ:*
   Էթնայի ստորոտում ապաստանած Կատանիա քաղաքը հայտնի է նրանով, որ իր բնակիչները դյուրաբորբոք բնավորություն ունեն:
2) *Ուսուցչի ներս մտնելուց հետո երեխաների զվարթ աղմուկը դադարեց:*
   Հենց որ ուսուցիչը ներս մտավ, երեխաների զվարթ աղմուկը դադարեց:
3) *Այդ ազնվատոհմ երիտասարդներից շատերը իշխանի գեղանի դստեր հետ ամուսնանալու երազանքով էին հաճախում Գարդման:*
   Այդ ազնվատոհմ երիտասարդներից շատերը Գարդման էին հաճախում, որովհետև երազում էին ամուսնանալ իշխանի գեղանի դստեր հետ:
4) *Անգամ միամիտ և հրապուրիչ Օֆելյան՝ աշխարհիկ կեղծավորությամբ կիսով չափ ապականված այդ հազվագյուտ մանուշակը, այլևս չի հուզում Համլետի սիրտը:*
   Անգամ միամիտ և հրապուրիչ Օֆելյան՝ այդ հազվագյուտ մանուշակը, որ աշխարհիկ կեղծավորությամբ կիսով չափ ապականված է, այլևս չի հուզում Համլետի սիրտը:

26 **Ո՞ր նախադասության մեջ միջոցի անուղղակի խնդիր կա:**

1) Բոլոր երկրներում մարդիկ սիրով են դիմավորում Նոր տարվա գալուստը:
2) Ես եկել եմ այն վերջնական եզրակացության, որ մարդիկ հիանում են իրենց չունեցած հատկություններով:
3) Ժայռերի ստվերոտ կողերը մամուռով են պատված. ջրերը թռչում են վերև, հասնում նրանց:
4) Նա գիտեր, որ անցյալ տարվա օրացույցով հունիսի տասնմեկը կիրակի էր:

27 **Ո՞ր նախադասության մեջ պատճառի պարագա *չկա:***

1) Լեզվին լավ չտիրապետելով՝ դժվարանում էր հաղորդակցվել դրացիների հետ:
2) Ինչո՞ւ իզուր հանգցնում ես Ջահել կրակն աչքերիդ:
3) Ի՞նչը կհաղթի կյանքում հերոսին, Թե չլինեն կինն ու գինին:
4) Ազնի՛վ եղիր ամեն ինչում. Ո՞վ է կյանքում սովից մեռել:

28 **Նշվածներից ո՞րը *չկա* ստորև բերված հատվածում (հատվածը կետադրված չէ):**

Այդ վայրկյաններին նրա աչքերը ցոլցլում էին քամին մեղմորեն ծածանում էր թավշյա մազերը ուրցի ծաղիկներով զարդարուն փռփռացնում դարձածալքերով շորը ընդգծելով վտիտ մարմինը: Մարանը ուրցի բույրով այդ աղջիկը սլացիկ հասակով մեկ կանգնում էր և անէացած նայում լուրթ երկնքին: Ներամփոփ հազիվ նկատելի նյարդային շարժումով նա անընդհատ հյուսում-քանդում էր ծամերը:

1) տրոհվող հատկացուցիչ
2) դերբայական դարձված
3) բացահայտիչ
4) տրոհվող որոշիչ

29 **Նախադասությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում այդ նախադասությունների տրամաբանական և քերականական ճիշտ հաջորդականությանը:**

1. Տաք երեկոներին մինչև իսկ բացօթյա քնում էի տատիս նվիրած թաղիքի վրա:
2. Այդ պատճառով էլ ամբողջ ամառ ես այգում էի անցկացնում, բացի, իհարկե, անձրևոտ օրերից:
3. Երբեմն տատս էլ էր քնում այգում. մի խուրձ խոտ էր բերում, փռում իմ օթևանի մոտ, պառկում ու երկար-բարակ որևէ բան էր պատմում:
4. Ես սիրում եմ մոտ գտնվել բնությանը, իսկ հնարավորության դեպքում փորձում եմ շատ վայելել նրա պարգևած հաճելի խաղաղությունը:

1) 4, 2, 1, 3
2) 1, 2, 3, 4
3) 4, 1, 2, 3
4) 1, 4, 3, 2

30 **Պատկերավորման-արտահայտչական ո՞ր միջոցը գործածված *չէ:***

Նրա ժպիտը մեղմ էր ու դողդոջ,
Որպես լուսնյակի ժպիտը տխուր.
Նա չուներ խոցող թովչանքը կնոջ.
Նա մոտենում էր որպես քաղցր քույր...

1) համեմատություն
2) բաղաձայնույթ
3) հանգավորում
4) մակդիր

31 **Ո՞ր տողն է Նահապետ Քուչակի «Ես աչք ու դու լոյս, հոգի՛» հայրենից:**

1) Ապա յիմ սրտէս ի դուրս՝ յերկըրէ յերկիր թափեցաւ…
2) Երբ զիս ի քենէ զատեն, քան զմեռնելն այլ ճար չի լինի:
3) Երեկ ցորեկով բարով տանեին մէկ եար մի ճորով…
4) Աստղերն այլ կոճակ արէ՛ք, զիս ի ներս ողկիկ շարեցէ՛ք:

32 **Ինչի՞ նկարագրությամբ է սկսվում Ա. Բակունցի «Ալպիական մանուշակ» պատմվածքը:**

1) Բակուր իշխանի դամբարանի
2) Կաքավաբերդի
3) Բասուտա գետի
4) ալպիական մանուշակների

33 **Հ. Թումանյանի «Անուշ» պոեմի դրվագներից ո՞րը բազմամարդ տեսարան *չէ:***

1) Սարոյի մոր ողբը
2) Համբարձման տոնը և վիճակ հանելը
3) Սարոյի և Մոսիի կռիվ բռնելը
4) Անուշի խելագարության տեսարանը

34 **Տրված հատվածներից ո՞րն է Ավետիք Իսահակյանի «Աբու-Լալա Մահարի» պոեմից:**

1) Գնա՛, քարավա՛նս, ինձ հետդ քա՛շ տուր
Օտար, ամայի ճամփեքի վրա.
Ուրտեղ կհոգնիս, գլուխս վա՛ր դիր
Ժեռ-քարերի մեջ, փշերի վրա:
2) Գիշերն ահարկու՝ և՛ սև, և՛ հսկա, մի չղջիկի պես թևերը փռեց,
Անծիր թևերը իջան, ծածկեցին քարավանն, ուղին և դաշտերն անափ:
3) Ո՛չ իշխանություն, ո՛չ կռիվ, ո՛չ կին
Չեն հափշտակում հիվանդ իմ հոգին:
Ղողանջն է միայն ձիգ քարավանի
Հեռավոր, անհայտ ճանապարհների
Հրապույրներով դյութում իմ հոգին
4) Ե՛վ անապատում, և՛ հավերժական
Անուրջում հոգիս կլսե, կզգա
Ղողանջը զանգի տիեզերական
Եվ մեղմ կգգվե տատասկին դժնյա:

35 **Ըստ «Սասնա ծռեր» էպոսի («Սասունցի Դավիթ» համահավաք բնագիր)՝ ի՞նչ պայման են կապում Մեծ Մհերը և Մլսրա Մելիքը:**

1) Ով հաղթի մենամարտում, նա դառնա և՛ Սասունի, և՛ Մլսրա թագավոր:
2) Ով շուտ մեռնի, նրա ընտանիքին տիրություն անի մյուսը:
3) Ով կարողանա հաղթել Սպիտակ Դևին, մյուսը նրան հարկ վճարի:
4) Ում տերությանը վտանգ սպառնա, մյուսը նրան զորքով օգնության հասնի:

36 **Ո՞ր ստեղծագործությունը հեղինակներից որինն է:**

ա.	«Այրին»	1.	Լ. Շանթ
բ.	«Հին աստվածներ»	2.	Մ. Մեծարենց
գ.	«Վայրկյան»	3.	Գ. Զոհրապ
դ.	«Արտերուն հրավերը»	4.	Դ. Վարուժան

1) ա-4, բ-1, գ-2, դ-3
2) ա-3, բ-1, գ-2, դ-4
3) ա-4, բ-1, գ-3, դ-2
4) ա-3, բ-2, գ-4, դ-1

37 **Դ. Դեմիրճյանի «Վարդանանքում» ի՞նչ է պատասխանում Վարդան Մամիկոնյանը Աթլրի այն հարցին, թե արդյոք հոների համար Հայաստանի վրայով կա ճանապարհ դեպի Բյուզանդիոն:**

1) Նկատելով բյուզանդացի զորավար Անատոլի ներկայությունը՝ հրաժարվում է ճանապարհ տրամադրելուց՝ խուսափելով Բյուզանդիայի հետ առանց այն էլ բարդ հարաբերությունների հետագա վատթարացումից:
2) Սիրով խոստանում է ճանապարհ՝ առաջարկելով հայոց ջերմ ընդունելությունն ու աջակցությունը:
3) Հոների համար դեպի Բյուզանդիոն տանող ճանապարհը համարում է մշտապես բաց, եթե նրանք դաշինք կնքեն հայերի հետ՝ ընդդեմ պարսից սպասվող պատերազմի:
4) Ասում է, որ ճանապարհ կա, բայց վերադարձ չկա՝ ակնարկելով Աթլրի՝ իր հետևից թողած սովը:

38 **Տողերի դասավորության ո՞ր տարբերակն է ճիշտ:**

1. Էլի՛ ես որբ ու արնավառ իմ Հայաստան-յա՛րն եմ սիրում
2. Չե՞մ մոռանա աղոթք դարձած երկաթագիր գրքերը մեր
3. Ուր էլ լինեմ, չեմ մոռանա ես ողբաձայն երգերը մեր
4. Ինչքան էլ սո՞ւր սիրտս խոցեն արյունաքամ վերքերը մեր

1) 3, 2, 1, 4
2) 1, 3, 2, 4
3) 3, 2, 4, 1
4) 1, 4, 3, 2

39 **Տրված բառերից քանիսի՞ բոլոր վանկերն են բաց.**

ծառուղի, հայրենի, բացակա, եզակի, փայտյա, գտածո, հիրավի, գետաձի, մարտավկա, մեծարգո, կատաղի, քաջարի:

40 **Տրված բառերից քանի՞սն ունեն հետևյալ կազմությունը՝ *արմատ+հոդակապ+արմատ.***

հողմահալած, ամենահաս, տարատեսակ, դռնեղուռ, հարկատու, դավանափոխ, մանրազնին, այրուձի, գորովագութ, մեղմանուշ:

41 **Տրված հատվածում քանի՞ ածական կա:**

Վերադառնալով խոհանոց՝ Մեսրոպը մետաղե պահարանից ստացավ պետերի համար միայն գործածելի փոքր չափսի պղնձամանը, ընտրեց իր ուզած միսը և անցավ գործի: Երկու ժամ անց ամենաբուրբ քիթն անգամ չէր կարող չզգալ ախորժելի ճաշի հաճելի բույրը: Մեսրոպն ուզեց ինչ-որ կերպ անվանել իր զարմանալի կերակուրը, որը կարողացավ խլացնել վիթխարի կաթսաներում խաշվող սառած կաղամբի ու կարտոֆիլի տհաճ հոտը:

42 **Նախադասություններից քանի՞սն են ընդարձակ:**

- Կկոտորեն հայրենիքն ուրացողներին:
- Ուրեմն ելի՛ր, ժողովո՛ւրդ:
- Հասել է օրը կենաց ու մահու կռվի:
- Մենք ենք դուրս գալու թշնամու դեմ:

43 **Քանի՞ բուրբ պիտի դրվի տրված հատվածում:**

Նորընծա վարպետ Մկրտչի բարեհամբույր մայրը նախօրոք որոշել էր երբ որդին դառնա ուստա անմիջապես ամուսնացնի: Որոշվեց այսպես Մկրտիչը պետք է իր կառուցած աղբյուրի բացման հաջորդ օրվա լուսաբացին թաքնվի աղբյուրի մոտ տեսնելու աղջիկներից ով է առաջինը ջուր վերցնելու ով լինի առաջինը նա էլ կդառնա ուստայի կինը:

44 **Տրված ստեղծագործություններից քանիսի՞ հեղինակն է Պ. Սևակը.**

«Կուզեի նստել մի քարի վրա», «Եղիցի լույս», «Մարդը ափի մեջ», «Մարդ էլ կա, մարդ էլ», «Առաջադրանք համայն աշխարհի հաշվիչ մեքենաներին և ճշգրիտ սարքերին», «Խոսք իմ որդուն», «Վարք մեծաց», «Դեպի լյառը Մասիս», «Անլռելի զանգակատուն»:

45 **Նշել այն բառերի համարները, որոնցում ուղղագրական սխալ կա:**

1. հապշտապ, 2. դիցուկ, 3. խորդուբորդ, 4. խառնիճաղանջ, 5. հանդիպակած, 6. թղպամած, 7. բազրիք, 8. համպատրաստից, 9. այբենական:

46 **Ո՞ր նախադասություններում է ընդգծված բառը գործածված փոխաբերական իմաստով:**

1. Խճուղու երկու կողմում ձգվում են խիտ ու բարձր ծառերի զույգ **պատերը:**
2. Ձյունածածկ լեռան բարձունքին **բազմել էր** հինավուրց ամրոցը:
3. Քարերը գլորվում էին դեպի **խորխորատները**, և նրանց աղմուկից ճերմակափետուր աղավնիները անհանգիստ ճախրում էին:
4. Մի զարմանալի թախծոտ կյանք էր **կանաչում** դեմը:
5. Սիմոնը **մեխվել էր** Սոնայի տան մոտ, և նեղվածք ու ցուրտ էր, և ձգող ոչ մի տաք անկյուն չկար:

47 **Ո՞ր շարքերում նախադասության անդամի ձևաբանական վերլուծության սխալ կա:**

Ինձ դիմավորեց գունատ դեմքով մի պատանի և առաջնորդեց ուրիշ սենյակ, և այդ վայրկյանին այնտեղից արագ քայլերով ընդառաջ եկավ մի կարճահասակ ծերունի:

1. **ինձ** – անձնական դերանուն, սեռական հոլով, **դիմավորեց** – ***ե*** խոնարհման պարզ բայ
2. **մի** – անորոշ դերանուն, **վայրկյանին** –***վա*** հոլովման գոյական
3. **արագ -** ձևի մակբայ, **առաջնորդեց** – սահմանական եղանակ, պարզ ժամանակաձև
4. **այնտեղից** – ցուցական դերանուն, **գունատ -** ածական
5. **եկավ** – անկանոն բայ, չեզոք սեռ, **ուրիշ -** անորոշ դերանուն

48 **Նախադասություններից որոնցո՞ւմ է ընդգծվածը դերբայական դարձված (նախադասությունները կետադրված չեն):**

1. Այդ պատերից **բավականին հեռու գտնվող** վայրերում ևս խոսում էին այդ դեպքերի մասին:
2. Մանրավաճառները անգամ **շունչ քաշելու** ժամանակ չունեն:
3. Հարևանները **նրան տեսնելով** հարգալից բարևում են:
4. Սիրում է **հասարակական գործունեությամբ զբաղվել:**
5. Գիշերվա կեսին **սարսափած քաղաքացիները** դուրս են թռչում տներից:

49 **Վ. Տերյանի ստեղծագործության վերաբերյալ պնդումներից որո՞նք են ճիշտ:**

1. «Մթնշաղի անուրջներ» շարքը սկսվում է «Տխրություն» բանաստեղծությամբ:
2. «Fatum» բանաստեղծության մեջ սիրող սրտերը համեմատվում են երկնքի աստղերի հետ, որոնք թեպետ հեռու են իրարից, բայց միշտ կարոտավառ երազում են իրար:
3. «Որպես Լաերտի որդին» բանաստեղծության մեջ հեղինակն իրեն համեմատում է երկար դեգերումներից հետո հայրենիք վերադարձող հոմերոսյան հերոսի հետ:
4. «Երկիր Նաիրի» շարքը բացվում է «Մի՛ խառնեք մեզ ձեր վայրի, արջի ցեղերին» բանաստեղծությամբ:
5. «Հրաժեշտի գազելում» բանաստեղծը տխրությամբ հրաժեշտ է տալիս իր սիրած էակին, որից պետք է անորոշ ժամանակով բաժանվի:

50 **Ո՞ր հատվածներն են միջին հայերենով:**

1. Դրռանս առջև կը նըստիմ միշտ տըխրալիր,
   Լուր կ’ուզեմ վրադ ամեն կռունկե՝ որ կ’անցնի:
2. Ջիմ եարն ամանաթ կու տամ.
   ի վարդին մէջն պահեցէք.
   Թէ երթամ ու շուտով դառնամ,
   զամանաթս ի տէ՛ր հասուցեք…
3. Ընդ եղեգան փող ծո՛ւխ ելանէր,
   Ընդ եղեգան փող բո՛ց ելանէր,
4. Դու տեր համորեն երկնի և երկրի,
   Իսկ ես չեմ իշխում շնչիս ու հոգուս…
5. Մեծցայ, սիրու տէր եղայ,
   երեսիս գոյնըն կու գընայ.
   Մանկտի՛ք, ձեր արև՞ն ասեմ,
   որ սիրուն քարըն չի դիմնայ…

Բ մակարդակ

51 **Ո՞ր շարքի բոլոր բառերի բաղադրիչներն են գրվում անջատ:**

1) դեմ(հանդիման), կողք(կողքի), ի(դեպ), Սանկտ(Պետերբուրգ)
2) գնալ(հասնել), ոոպե(առ)ոոպե, ձեռք(բերում), ալ(կարմիր)
3) ի(զուր), առ(այն), ծիլ(տալ), երեքից(չորս)
4) տարեց(տարի), տեր(Սահակ), ըստ(իս), մի(երկու)

52 **Ո՞ր շարքի բոլոր բառերի առաջին արմատն է բազմավանկ:**

1) դրույքաչափ, տղամարդ, ուղեվճար
2) փափկասուն, բազմազբաղ, ալեծուփ
3) փոշեկուլ, մանրախնդիր, մշտադալար
4) սկզբնական, փախստական, ավարառու

53 **Ո՞ր շարքի *ոչ* բոլոր բառազույգերն են կազմված հոմանիշներից:**

1) սնապարծ-գոռոզամիտ, ծվատել-հոշոտել
2) ակնապիշ-սևեռուն, դեզ-հարդ
3) գավաթ-ըմպանակ, փորձանք-պատուհաս
4) բերկրավետ-ուրախալի, մտմտալ-խորհել

54 **Ո՞ր շարքում կրկնավոր բարդություն *չկա:***

1) դհոլ-զուռնա, գիշեր-ցերեկ, ծիլ-ծաղիկ
2) ձայն-ծպտուն, առոք-փառոք, այսօր-վաղը
3) լավ-վատ, մանր-մունր, դեղ-դարման
4) մազ-մորուք, կաս-կարմիր, ձյուն-ձմեռ

55 **Ո՞ր նախադասության մեջ վերաբերական *չկա:***

1) «Գուցե մի նոր հյուր են բերում»,- չարախնդաց բանտապետը:
2) Բոլորը տամ ու նվիրեմ, ինձ ոչ մի հուր թող չմնա:
3) Ես վստահ էի, որ ամեն առավոտ նրան կհանդիպեմ հենց նույն տեղում:
4) Ժպիտը մարող գույներով գծագրվում էր նրա դեմքի վրա և իսկույն անհետանում:

56 **Ո՞ր նախադասության մեջ անկանոն բայ *չկա:***

1) Հեռվից դիտողին ծովը մարգարտե ցող է թվում՝ պատած երեքնուկի թերթիկներով:
2) Ամպերը ճերմակ երամով անցան, իմ սիրտն է լալիս կարոտով անհուն:
3) Գիտեինք միայն, որ քեռիս զինվոր եղած ժամանակ ընդդիմացել է:
4) Կուշտ կերած մեր ձիերը սկսեցին բարձրանալ քարոտ արահետով՝ մեկը մյուսին հրմշտելով:

57 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են համապատասխանում նշված տեսակին:**

1) հոգաբարձու, ամենայն, թեպետ – *նյութական*
2) գոնե, շնորհիվ, անգամ – *վերաբերմունքային*
3) մինչև, հանձինս, չնայած որ – *քերականական*
4) առթիվ, որևէ, ի փառս – *քերականական*

58 **Ո՞ր տարբերակում հատկացուցիչ *չկա:***

1) Մենավո՛ր իմ սիրտ, մոլորվա՛ծ թռչուն, Կարոտիդ կանչը չի հասնի նրան:
2) Կմոռանամ հեռվի աղմուկը ահեղ, Կզգամ համբույրը ուրիշ օրերի:
3) Է՜յ դու, ջահե՛լ, հպարտ հասակ, Անցար ոսկի ամպի պես:
4) Ահա եկել հավաքվել են Կտրիճները Կովկասի:

59 **Ուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:**

-Անկարելի է,- պատասխանեց ծերունին տղային.- եթե թողնեմ, էլ երբեք չեմ տեսնի աղջկաս. դու էլ մնա՛ մեզ մոտ և շուտով կմոռանաս քո տխուր երկիրը:

1) Ծերունին տղային պատասխանեց, որ անկարելի է. եթե թողնի, էլ երբեք չի տեսնի իր աղջկան. ինքն էլ թող մնա իրենց մոտ և շուտով կմոռանա իրենց տխուր երկիրը:
2) Ծերունին պատասխանեց տղային, որ անկարելի է. եթե թողնի, էլ երբեք չի տեսնի նրա աղջկան. նա էլ թող մնա իրենց մոտ և շուտով կմոռանա իր տխուր երկիրը:
3) Ծերունին պատասխանեց տղային, որ անկարելի է. եթե ինքը թողնի, էլ երբեք չի տեսնի իր աղջկան. նա էլ թող մնա իրենց մոտ և շուտով կմոռանա իր տխուր երկիրը:
4) Ծերունին պատասխանեց տղային, որ անկարելի է, եթե նա թողնի, էլ երբեք չի տեսնի իր աղջկան. նա էլ մնա իրենց մոտ և շուտով կմոռանա իր տխուր երկիրը:

60 **Ո՞ր տարբերակում է ստորադաս նախադասության բնույթը սխալ նշված:**

1) Զորավարը խորհում էր այն մասին, որ պալատում իր թշնամիները կարող էին արքայի առաջ չարախոսել իրեն: *(վերաբերության անուղղակի խնդիր)*
2) Տեղ հասնելու առաջին իսկ օրից Սմբատ Բագրատունին ուշիուշով հետևում էր, թե ինչ է կատարվում մայրաքաղաքում: *(հանգման անուղղակի խնդիր)*
3) Ինչի՞ց է, որ ամեն անգամ մենք բաժանվելիս վիճում ենք: *(պատճառի պարագա)*
4) Դու, որ այդպես էլ չհասկացար աշխարհի չարն ու բարին, այժմ դատապարտել ես քեզ կատարյալ մենության: *(բացահայտիչ)*

61 **Ո՞ր պնդումն է սխալ:**

1) Հ. Մաթևոսյանի «Կանաչ դաշտը» պատմվածքի ավարտին զոհվում են կռվի բոլոր մասնակիցները՝ գայլը, մայր ձին և քուռակը:
2) *«Այնինչ՝ նիրհում է աստված իր հոգում»* տողում խտացված է Հ. Շիրազի «Բիբ-լիական» պոեմի բովանդակությունը:
3) Մասրենին Հ. Սահյանի համանուն բանաստեղծության մեջ խորհրդանշում է հայ ժողովրդի տոկունությունը:
4) Գ. Մահարու «Ծաղկած փշալարեր» վիպակում ցույց է տրված, թե ինչպես ամենա-ծանր հալածանքների պայմաններում անգամ մարդը փորձում է պահպանել մարդկային արժեքները:

62 **Հ. Պարոնյանի նշված ստեղծագործություններից ժանրային առումով ո՞րն է *նովելների շարք*:**

1) «Քաղաքավարության վնասները»
2) «Պաղտասար աղբար»
3) «Մեծապատիվ մուրացկաններ»
4) «Ազգային ջոջեր»

63 **Տրված բառերից քանի՞սն են կազմությամբ պարզ.**

հավատ, հրավեր, բարիք, դժխեմ, հասուն, դպրոց, եկեղեցի, դաշույն:

64 **Մտքերից քանի՞սն են հակասում տեքստի բովանդակությանը կամ *չեն* բխում նրանից:**

Դարեր շարունակ մարդիկ փորձել են ստեղծել տարածության չափման միավորներ: Ոտնահետքերի միջև եղած հեռավորության չափումից առաջացել է ոտնաչափը, արմունկից մինչև միջնամատի ծայրը չափից՝ կանգունը և այլն:

Դրանցից մեծ միավորների առաջացումը կապվում է հողաբաժանման հետ. հողագործը պետք է համոզված լիներ, որ իր հողակտորը իրեն հասանելիքից ավելի փոքր չէ: Սկզբնական շրջանում ոտնաչափերով չափվող հողակտորներն ակնհայտորեն անհավասար էին, քանի որ չափողի հասակից կախված՝ ոտնաչափը կարող էր տարբեր լինել: Բավական երկար ժամանակ չափման խնդիրը լուծել է եգիպտական կանգունը, որի չափը սահմանվեց ըստ թագավորի բազկի երկարության: Դրա գրանիտե բնօրինակը պահվում էր պալատում:

Այնուհետև ֆրանսիացի հեղափոխականները ստեղծեցին մետրը, որի՝ որպես չափման միավորի, հիմքում դրված էր Հյուսիսային բևեռից մինչև հասարակածն ընկած հեռավորության 10 միլիոներորդ մասը:

*Արեգակնային համակարգում չափումներ իրականացնելու համար չափման միավոր ընդունվեց Երկրից մինչև Արեգակ միջին հեռավորությունը: Ավելի մեծ տարածությունների համար օգտագործվում է **լուսատարի** հասկացությունը: Դա այն հեռավորությունն է, որը լույսն անցնում է մեկ տարվա ընթացքում բացարձակ վակուումում:*

- Գոյություն ունեցող չափման միավորների առաջացման հիմնական դրդապատճառներից մեկը կապվում է հողագործության հետ:
- Եգիպտական կանգունը հավասար էր մեկ ոտնաչափի:
- Ֆրանսիացի հեղափոխականների առաջարկած մետրը կազմում է հասարակածի 10 միլիոներորդ մասը:
- Երկրից մինչև Արեգակ միջին հեռավորությունը մեկ լուսատարի է:
- Ֆրանսիական հեղափոխության տարիներին մարդկությանը հայտնի էր, թե որքան է հեռավորությունը Հյուսիսային բևեռից մինչև հասարակած:

65 **Նախադասության անդամներից քանիսի՞ շարահյուսական պաշտոնն է ճիշտ նշված:**

Չինացիները խոսում են իրարից խիստ տարբեր յոթ բարբառներով, որոնք բոլորովին էլ հասկանալի չեն այլ բարբառով խոսողին:

- **բոլորովին** - որոշիչ
- **որոնք** - ենթակա
- **այլ** – որոշիչ
- **հասկանալի չեն** – պարզ ստորոգյալ
- **խիստ** – չափի պարագա

66 **Ո՞ր նախադասություններում ստորակետ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

1. Զարմանում եմ ինչպես կարողացավ նա գոյատևել գտնվելով թշնամական և օտար միջավայրում:
2. Այնտեղ մթին թավուտների խորքերում կա մի լքված խրճիթ:
3. Այդ ամենի հողածածկ կտուրներով տների ու գյուղական խորդուբորդ ճամփաների կարոտն էր զգում մշտապես:
4. Հանկարծ ծոցից հանելով տետրը սպիտակ թղթի վրա մատիտի արագ շարժումով նկարեց կնոջը օջախի մոտ նստած աչքերը օջախի քարին:

67 **Ո՞ր բառերում արմատի հնչյունափոխություն կա.**

1. արարչագործ, 2. տամկանալ, 3. ուսուցչություն, 4. ակնկոր, 5. միջնաբերդ, 6. կուտակել, 7. ժողովրդական, 8. շառագունել, 9. մշակութային:

68 **Որո՞նք են պարզ բայեր (առանց բայական ածանցի).**

1. հագնել, 2. խառնել, 3. թողեք, 4. նեղսրտեց, 5. վերածնել, 6. ցատկոտեց, 7. կորցրած, 8. գոհանանք, 9. կորանք:

69 **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել *Ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ* տարբերակներից որևէ մեկը:**

1. Բոլոր անձնական դերանունները թե՛ եզակի, թե՛ հոգնակի թվերում հոլովվում են գոյականից տարբեր ձևով:
2. ***Ոմն*** դերանունը հոլովվում է միայն եզակի թվում:
3. Ոչ բոլոր փոխադարձ դերանուններն են հոլովվում:
4. Բոլոր հոլովվող որոշյալ դերանունները ենթարկվում են գոյականական ***ի*** հոլովման:
5. Առարկա ցույց տվող բոլոր դերանունները նախադասության մեջ կարող են դառնալ ենթակա:
6. Բոլոր ցուցական դերանունները հոլովվում են գոյականից տարբեր ձևով:

70 **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել *Ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ* տարբերակներից որևէ մեկը:**

1. Բառասկզբի *ը*-ն կարող է հնչյունափոխվել:
2. Բառասկզբի *ի*-ն շեշտից զրկվելիս միշտ հնչյունափոխվում է:
3. *Ու, ի, է(ե)* ձայնավորները հնչյունափոխվելիս կարող են վերածվել բաղաձայնների:
4. *Ույ* երկհնչյունը կարող է հնչյունափոխվել միայն *ու*-ի:
5. Բառասկզբի *է* ձայնավորը հնչյունափոխվելիս կարող է դառնալ *ի:*
6. *Յու* երկհնչյունը հնչյունափոխվելիս կարող է և՛ դառնալ գաղտնավանկի *ը*, և՛ սղվել: